ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2019 թվականի N:244-ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՋՐԱՀԵՂՁՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «բ», «դ» և «զ» կետերի դրույթներով՝ 2019 թվականի ամառային ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերը կանխարգելելու և բնակչության պաշտպանությունն ապահովելու նպատակով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1.Հանձնարարել.

1) Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի թվով 6՝ Մանթաշի, Թավշուտի, Արփիի, Կառնուտի, Սառնաղբյուրի և Վարդաքարի ջրամբարների պատասխանատուներին.

ա. ամառային ժամանակահատվածում մարզի ջրամբարների տարածքներում սահմանել ուժեղացված շուրջօրյա հերթապահություն,

բ. ջրամբարներին հարակից տարածքներում մշտապես իրականացնել սանիտարական գոտու պահպանության համար նախատեսված միջոցառումներ,

գ. արգելել անսարք կամ ինքնաշեն լողամիջոցներով ջրամբարների ջրային տարածք մուտք գործելը.

2) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղի տնօրենին՝

ամառային ժամանակահատվածում մարզի ջրային ավազանների սանիտարական վիճակի նկատմամբ սահմանել խիստ հսկողություն.

3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գործող զանգվածային լրատվամիջոցներով ազգաբնակչությանը պարբերաբար տեղեկացնել ջրային տարածքներում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:

2.Առաջարկել.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներին մոտ գտնվող համայնքների ղեկավարներին (համաձայն հավելվածի)՝

1) համայնքի տարածքում կամ համայնքին մոտ գտնվող ջրային տարածքներում տեղադրել համապատասխան նախազգուշացնող ցուցատախտակներ.

2) համայնքի ուժերով սահմանել հսկողություն ջրային տարածքներում.

3) ջրահեղձման դեպքերի կանխարգելման նպատակով հանգստի վայրերում՝ հովեկների շրջանում իրականացնել բացատրական աշխատանքներ:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Վարդան Գրիգորյանին:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2019 թվականի
հունիսի 05-ի N 244-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ (ՋՐԱՄԲԱՐՆԵՐ, ԼՃԵՐ) ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Ջրային տարածքի անվանումը
1	2	3	4
1.	Գյումրի	Գյումրի	Քաղաքային լողավազաններ, շատրվաններ, ջրավազաններ
2.	Ազատան	Ազատան	Ազատանի լիճ
3.	Ախուրիկ	Ախուրիկ	Ախուրյանի ջրամբար (Ախուրիկի լճակ)
4.	Բայանդուր	Բայանդուր	Ախուրյանի ջրամբար
5.	Գետք	Գետք	Ախուրյանի ջրամբար
6.	Երազգավորս	Երազգավորս	Ախուրյանի ջրամբար
7.	Ախուրյան	Կառնուտ	Կառնուտի ջրամբար
8.		Կրաշեն	Կրաշենի լճակ
9.		Հովիտ	Կառնուտի ջրամբար
10.		Բասեն	Կառնուտի ջրամբար
11.	Մարմաշեն	Մարմաշեն	Մարմաշենի լճակ
12.		Վահրամաբերդ	Վահրամաբերդի լճակ
13.		Ջաջուռ	Ջաջուռի սելավակարգավորիչ ջրամբար
14.	Անի	Մարալիկ	Մարալիկի սելավակարգավորիչ ջրամբար
15.		Ձորակապ	Մարալիկի սելավակարգավորիչ ջրամբար
16.		Քարաբերդ	Գյուղամիջյան լճակ
17.		Աղին	Ախուրյանի ջրամբար
18.		Իսահակյան	Ախուրյանի ջրամբար
19.		Լուսաղբյուր	Ախուրյանի ջրամբար
20		Շիրակավան	Ախուրյանի ջրամբար
21.		Ջրափի	Ախուրյանի ջրամբար
22.		Սառնաղբյուր	Սառնաղբյուրի ջրամբար
23.	Արփի	Զարիշատ, Երիզակ	Արփի լճի ջրամբար
24.		Բերդաշեն, Պաղակն	Արփի լճի ջրամբար
25.		Գառնառիճ, Եղնաջուր	Արփի լճի ջրամբար
26.		Ձորակերտ, Դարիկ	Արփի լճի ջրամբար
27.		Ծաղկուտ, Լորասար	Արփի լճի ջրամբար

28.		Շաղիկ	Արփի լճի ջրամբար
29.	Աշոցք	Բավրա	Թավշուտի ջրամբար
30.		Թավշուտ	Թավշուտի ջրամբար
31.		Սիզավետ	Թավշուտի ջրամբար
32.	Սարապատ	Ձորաշեն	Ձորաշենի լճակ
33.		Սարապատ	Ձորաշենի լճակ
34.	Փոքր Մանթաշ	Փոքր Մանթաշ	Արհեստական լճակ
35.	Վարդաքար	Վարդաքար	Վարդաքարի ջրամբար
36.	Հովտաշեն	Հովտաշեն	Վարդաքարի ջրամբար
37.	Հոռոմ	Հոռոմ	Վարդաքարի ջրամբար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է